ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 15-ը ապրիլի 2019թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան (ԳԱՊ),

ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի վարչության սպառազինության բաժնի պետ, գնդապետ Յու. Եսայան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Տ. Գասպարյան,

ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի վարչության սպառազինության բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մուրադյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ Ա. Գրիգորյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին <ԴԵԼՏԱ-ԳՐՈՒՊ> ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են բաց մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

<ԴԵԼՏԱ-ԳՐՈՒՊ> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից հաստատված ուղեկցող գրությամբ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը ուղղված հանձնաժողովին:

Հանձնաժողովը կասեցրել է նիստը և <ԴԵԼՏԱ-ԳՐՈՒՊ> ՍՊԸ -ին ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված անհամապատասխանությունը: 17.04.2019թ. նիստը շարունակվել է և գնահատող հանձնաժողովը ներկայացրած շտկված անհամապատասխանությունը գնահատել է հրավերի պահանջներին համապատասխանող:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության

պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

1.2 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 17.04.2019թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց <ԴԵԼՏԱ-ԳՐՈՒՊ> ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Գրիգորյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Կարապետյան

Գնահատող Յու. Եսայան

Գնահատող Տ. Գասպարյան

Գնահատող Ա. Մուրադյան

Գնումները համակարգող՝ Ա. Գրիգորյան